

**ՇՊՀ-ՈւՄ ՈւՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ
Սարգսյան Ա. Հ.**

Սույն հոդվածում ներկայացվում է ՇՊՀ-ի ուսանողների վարկանիշավորման և խրախուսման համար մշակված և ներդրված մեխանիզմը, որը ձևավորվել է շահակիցների կարծիքների ուսումնասիրման և հետազոտության արդյունքում:

Բանալի բառեր. ուսանող, վարկանիշավորում, գնահատման չափանիշ, մարդկային ռեսուրսների որակի կառավարում:

1. Նախաբան: Բուհերի որակի կառավարման գործընթացներում առանձնակի կարևորություն և նշանակություն ունեն ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումները [1,2]: Ուսանողակենտրոն ուսուցումը ամբողջ աշխարհում փոխարինում է դասախոսակենտրոն ուսուցմանը: Հայաստանում այս մոտեցումները սկսեցին կարևորել հատկապես բոլոնյան գործընթացներով, կրեդիտային համակարգի ներդրմամբ և դրան զուգընթաց [1-3]: Ենթակառուցվածքային հավատարմագրման սահմանված չափանիշներից 4-րդը՝ Ուսանողները, ենթադրում է. ՄՈւՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով [3-5]: Ըստ այս չափանիշում սահմանված չափորոշիչների՝ մասնավորաբար կարևորվում է ուսանողներին հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելը, ուսանողների ակտիվ ներգրավվածությունը բուհի տարբեր գործընթացներում:

Ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումների ներդրման և բուհերում ենթակառուցվածքային կառավարման համակարգերին ներկայացվող պահանջների տեսանկյունից շատ կարևոր է ուսանողների համապատասխան գործունեությունը խրախուսելու

մեխանիզմների ներդրումը: Տարբեր բուհեր մշակել և ներդրել են ուսանողների խրախուսման տարբեր մեխանիզմներ: ՇՊՀ-ում դեռևս 2017թ.-ից ձեռնարկվել է մշակել համապատասխան կարգ: Քննարկումներ են իրականացվել ուսանողների բավական լայն շրջանակի հետ, ներառվել են նաև ՇՊՀ-ի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության առաջարկությունները, որոնք համապատասխան ուսանողական համակազմերի հետ քննարկման արդյունքներ են: Հետազոտությունն իրականացվել է որպես ՇՊՀ-ի Գիտական քաղաքականության որակի ապահովման և կառավարման կենտրոնի ղեկավար [6]: Բացի այդ, այստեղ ներկայացվում է մշակված մեխանիզմների ներդրման արդյունքում փորձնական հետազոտության ընդհանրական արդյունքները:

2. ՇՊՀ-ի ուսանողների գնահատման չափանիշները: 2017-2018 թթ.-ին ՇՊՀ-ում նպատակ էր դրվել մշակել ուսանողների վարկանիշավորման մեխանիզմ, որի արդյունքները կօգտագործվեին ինչպես խրախուսման, այնպես էլ բարելավումների իրականացման համար: Ուստի ՇՊՀ-ի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնը ձեռնարկեց մշակել այդպիսի մեխանիզմ, որը միաժամանակ կնպաստեր ուսանողների մոտիվացվածության բարձրացմանը՝ ուղղված համալսարանի ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացմանը:

Մշակվել է «Շիրակի պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների վարկանիշավորման և խրախուսման կանոնակարգ, որը հաստատվել է 2020թ.-ի հունվարի 31-ին [6]: Այն միտված է ուսումնական, գիտական և հասարակական աշխատանքների ուղղություններով ուսանողների պոտենցիալի որակի ուսումնասիրմանը, խթանմանը, հետագա զարգացմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև նրանց՝ ՇՊՀ-ի զարգացման գործընթացներին ներգրավվածության ապահովմանը:

Կանոնակարգում որպես ուսանողների վարկանիշավորման ուղղություններ առանձնացվում են՝ 1. ուսանողների ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպչական գործունեություն, 2. ուսանողների գիտական, գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեություն, 3. ուսանողների ներհամալսարանական և արտահամալսարանական (հանրային) հասարակական գործունեություն:

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՆ ՎՈՐՄԱՆ ՏԱՐԵՎԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ**

		Քանակ		Վարկանիշային միավոր	Հիմք կցվում է
Ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպական աշխատանք					
1.	ՄՈԳ /0,1/				
2.	Մասնագիտական առարկաների ՄՈԳ /0,1/				
3.	Մասնակցություն մասնագիտական կրթական ծրագրերի մշակումներին /2/				
4.	Մասնակցություն մասնագիտական ուսումնական պլանների մշակումներին /2/				
5.	Մասնակցություն դասավանդման բարելավմանը միտված գիտաժողովների և աշխատաժողովների (տրակտորման բարձրագույն) /1/				
6.	Ինտելեկտուալ, գիտահանրամատչելի, եռարարական միջոցառումներին մասնակցություն /1/				
7.	Գիտական խորհրդի անդամ /1/				
8.	Ֆակուլտետի խորհրդի անդամ /0,5/				
9.	Օլիմպիադաներին, մրցույթներին, ցուցահանդեսներին մասնակցություն /2/	Հանրապետական		Միջազգային	
		Մասնակից /0,5/	Մրցանակակիր /1/	Մասնակից /1,5/	Մրցանակակիր /2/
Գիտական, գիտահետազոտական և գիտակազմակերպական գործունեություն					
10.	Գիտական հոդված /4/	Ազդեցության ունեցող Web of Science և Scopus բնագավառում ընդգրկված պարբերականներ /2/	ՌԴ-ի	ԲՈՆ-ի	ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված պարբերական կամ հանրապետական գիտաժողովի կազմում /1,5/
			Մրցանակակիր /1/	Մրցանակակիր /2/	Մրցանակակիր /1/
11.	Թեզիս /2/	Հանրապետական գիտաժողովի /1/		Միջազգային գիտաժողովի /2/	
12.	Գիտահետազոտական նախագծերի և դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն /3/	Հանրապետական /1/		Միջազգային /2/	
Ներհամալսարանական և արտահամալսարանական (հանրային) հասարակական գործունեություն					
13.	ԸՊՀ-ի կառավարման խորհրդի անդամ /1/				
14.	ԸՊՀ-ում գործող ժամանակավոր և գիտական խորհրդի կից հանձնաժողովների անդամակցություն /2/				
15.	Ամբիոնի որակի հանձնաժողովի անդամակցություն /1/				
16.	Համալսարանի դիմորդների կողմնորոշման և հավաքագրման աշխատանքների մասնակցություն /1/				
17.	Ոչ գիտական դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն /2/				
18.	Կրթական, սոցիալական, մշակութային և սպորտային բնույթի նախագծերի մասնակցություն /1/				
19.	Կամավոր աշխատանք (Գիտական քաղաքականություն, որակի ապահովման և կառավարման կենտրոնում, Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, եռարարությունների և ՏՏ կենտրոնում և այլն) /3/				
20.	ՈւՆ-ի անդամակցություն /1/				
21.	ՈւԳԸ-ի ներկայացուցիչ /1/				

Նկ. 1

Մշակված է գնահատման ձևաչափի և նկարագրված է մանրամասն ընթացակարգ, գործընթացների իրագործմանը ներգրավված է ուսանողական գիտական ընկերությունը: Նշենք, որ սկզբում նպատակ կար համընդհանուր ուսանողական հենք ստեղծելու, ինչը նախ թույլ կտար գնահատելու համընդհանուր ուսանողական ռեսուրսները և կնպաստեր առավել արդյունավետ կառավարմանը: Մակայն նկատի ունենալով, որ տեղեկատվության հավաքագրումը բավականին դժվարությունների հետ է կապված, ուստի հաստատված փաստաթղթում դեռևս ընդունվեց այն տարբերակը, երբ

տեղեկատվությունը հավաքագրվում է միայն այն ուսանողների համար, ովքեր դիմում են մրցույթին մասնակցելու համար:

Բաժիններից յուրաքանչյուրում չափանիշները սահմանվել են՝ գլխավորապես նկատի ունենալով բուհի ռազմավարական առաջնահերթությունների արդյունավետ իրականացումը, ներքին շահակիցների կարծիքները, ինչպես նաև ենթակառուցվածքային հավատարմագրման 4-րդ չափանիշի պահանջները (նկ. 1) [6]: Նշենք նաև, որ մեխանիզմի մշակման համար նկատի է առնվել նաև ՇՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման և վարկանիշավորման մշակված և ներդրված մեխանիզմը [7]:


3. ՇՊՀ-ի ուսանողների գնահատման գործընթացը: 2020-2021 ուստարվա համար ՇՊՀ-ի ուսանողների շրջանում տրվել է հայտարարություն մրցույթի անցկացման վերաբերյալ: Գործընթացի իրականացման արդյունքում վեր են հանվել խնդիրներ, որ սահմանված չափանիշները լրացուցիչ մեկնաբանման կարիք ունեն առավել դյուրըմբռնելի լինելու համար, ինչպես նաև վերանայվել են որոշ դրույթներ: Մշակվել է համապատասխան մեթոդական ցուցումներ՝ մանրամասն նկարագրով: Փաստաթղթային հիմքերի հավաքագրման և ուսումնասիրման ժամանակ պարզվել է, որ որոշ գործընթացների հետ կապված պահանջվող հիմքերը հստակեցման կարիք ունեն, այս հանգամանքը ևս հաշվի է առնվել մեթոդական ցուցումները կազմելիս:

Հետազոտությունն իրականացվել է 2020-2021 ուստարվա հայտարարությամբ դիմած ուսանողների համար, որին մասնակցել է 8 ուսանող: Վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ ՇՊՀ-ի ուսանողների ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնակազմակերպչական գործունեության արդյունքում ձևավորված միջին միավորը շուրջ 20,5 է (նկ. 2, 4): Ըստ այս ուղղության՝ միավորների ամենացածր շեմը շուրջ 18 է, իսկ ամենաբարձրը՝ շուրջ 28, ընդ որում՝ միավորները գլխավորապես ձևավորվել են միջին որակական գնահատականի հիման վրա (նկ. 2):


Գիտական, գիտահետազոտական, գիտակազմակերպչական գործունեության միջին վարկանիշային միավորը 3,63 է (նկ. 4), ընդ որում՝ միավորների ամենացածր շեմը 0 է, իսկ ամենաբարձրը՝ 12:

Ներհամալսարանական և արտահամալսարանական (հանրային) հասարակական գործունեության միջին վարկանիշային միավորը շուրջ 4,75 է (նկ. 3,4): Այս ուղղության միավորների ամենացածր շեմը 0 է, իսկ ամենաբարձրը՝ 14: Նշենք, որ վերլուծությունն իրականացվել է ըստ

յուրաքանչյուր ուսանողի, կիրառվել է Microsoft Excel միջավայրը:



Նկ. 2




Նկ. 3

Ընդհանուր վարկանիշային միավորների միջին ցուցանիշը շուրջ 29

է, ընդ որում՝ ամենացածր շեմը շուրջ 19 է, իսկ ամենաբարձրը՝ շուրջ 46: Հարկ է նկատել, որ ընդհանուր վարկանիշային միավորի մեծ բաղադրիչը կազմում է ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնակազմակերպչական գործունեության ցուցանիշը, իսկ գիտական, գիտահետազոտական, գիտակազմակերպչական գործունեության և ներհամալսարանական և արտահամալսարանական (հասարակական) գործունեության ցուցանիշները բավականին ցածր են:

Արդյունքները վերջնական ամփոփելուց հետո համապատասխան հանձնախմբում քննարկելով կիրառվելու են խրախուսման միջոցներ՝ ըստ կանոնակարգի [6]: Այս պարագայում, կարծում ենք, հաջորդիվ մասնակցությունն առավել համակարգված և մոտիվացված բնույթ կկրի: Քանի որ, ինչպես ցույց է տալիս համանման ուսումնասիրությունների փորձը, նման պարագայում էական նշանակություն է ստանում հետազոտության արդյունքներով պայմանավորված հետևանք ունենալը, ինչը մոտիվացման կարևոր աղբյուր է: Միաժամանակ հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ անհրաժեշտություն է առաջանում ուսանողների գործունեության այլ տեսակներ ևս ներառել և խրախուսել վերջիններս, ինչը առաջին տարբերակում դեռևս հաշվի չէր առնվել: Մասնավորաբար կարևոր է ուսանողների ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցությունը. հետազոտության ժամանակ ներկայացվել են նման տվյալներ, և վերջիններս ընդգրկվել են 9-րդ կետի ներքո (նկ. 1):



Նկ. 4

4. Եզրակացություն: Այսպիսով, հարկ է նշել, որ մշակված մեխանիզմը կարևոր նշանակություն ունի խրախուսելու ուսանողների գործունեությունն ըստ բուհի առաջնահերթությունների: Միաժամանակ վերջինիս համընդհանուր էլեկտրոնային համակարգով կիրառումը հնարավորություն է ընձեռում գնահատելու ռազմավարական առաջնահերթությունների և նպատակների իրագործման համար ուսանողական ռեսուրսները և արդյունավետորեն կիրառել ռազմավարական ծրագրի իրագործման ժամանակ: Բացի այդ, խրախուսման մեխանիզմը հնարավորություն է տալիս զարգացնելու բուհի առաջնահերթություններով պայմանավորված լրացուցիչ կարողությունները:

РЕЙТИНГОВАЯ СИСТЕМА СТУДЕНТОВ ШГУ КАК МЕХАНИЗМ УПРАВЛЕНИЯ КАЧЕСТВОМ ЧЕЛОВЕЧЕСКИХ РЕСУРСОВ

Саргсян А. А.

В данной статье представлен разработанный и встроенный механизм рейтинга и поощрения студентов ШГУ, который является результатом изучения мнений заинтересованных сторон и исследований.

Ключевые слова: студент, рейтинговая система, критерии оценки, управление качеством человеческих ресурсов.

THE RATING SYSTEM OF STUDENTS IN SUSH AS A MECHANISM FOR MANAGING THE HUMAN RESOURCES QUALITY

Sargsyan A. H.

In this paper the developed and built-in mechanism for SUSH students rating and rewarding are presented, which is the result of studying the opinions of stakeholders and research.

Keywords: student, rating system, assessment criteria, human resources quality management.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բուդաղյան Ա., Սարգսյան Յ., Մանասյան Ն., Մանթուրջյան Մ. Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի

- համատեքստում: Զեկույց/ Բարձրագույն կրթ. ռազմավար. հետազոտ. ազգ. կենտրոն: Երևան: «Փրինթինֆո»: 2012: 228 էջ:
2. Հռոմի նախարարական կոմյունիկե, 2020 թ.-ի նոյեմբերի 19:
 3. Թովչյան Ռ., Կարախանյան Ս., Ութմազյան Ա., Մակարյան Ա, Գյուլազյան Վ. ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ: «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ: ՈԱԱԿ, Համաշխարհային Բանկ, ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ: 2015 թ.: 116 էջ:
 4. ՀՀ կառավարության 30.06.2011 թ.-ի N 978-Ն որոշումը ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2000 թ.-ի հուլիսի 7-ի N 372 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
 5. ՀՀ կառավարության 30.06.2011 թ.-ի N 959-Ն որոշումը ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին:
 6. ՇՊՀ-ի ուսանողների վարկանիշավորման և խրախուսման կանոնակարգ:/Հաստատված ՇՊՀ-ի գիտական խորհրդի 31.01.2020 թ.-ի նիստով:
 7. Սարգսյան Ա. Հ. ՇՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի վարկանիշավորումը որպես մարդկային ռեսուրսների որակի կառավարման մեխանիզմ: // ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր: 2021: N 1, Պրակ Ա: Էջ 95-104:

Տեղեկություններ հեղինակի մասին

Սարգսյան Ա. Հ. - ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան, Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն

Էլ. փոստ armenuhis@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 13.09.2021

Գրախոսվել է՝ 29.12.2021